# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2026թ. հունվարի 20-ին, N 24 -Ա

### ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԴԴՄԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով և հիմք ընդունելով Ալբերտ Սարգսյանի 2026 թվականի հունվարի 19-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Ալբերտ Սարգսյանին 2026 թվականի հունվարի 21-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Դդմասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար երեք ամիս ժամկետով՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Դդմասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ալբերտ Սարգսյանի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 1/21/2026 15:08:42 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890157

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ